ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» փետրվարի 2015 **թ.** **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

Հ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 269-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով և 3-րդ կետով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 93-Ն որոշմամբ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 5-րդ մասով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 2015 թվականի հունվարի 12-ի հ. 17-3-12 գրությամբ տրված համաձայնությունը և 15.01.2015թ. «Ալ Պառկո Հյուրանոց» ՍՊԸ-ի տնօրենի դիմումը `

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել քաղաքացի Հ. Սարգսյանին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

2. Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու և ծառայողական ավտոկայանատեղեր կազմակերպելու իրավունք տալու մասին» N269-Ա որոշման N1 հավելվածի 4-րդ սյունյակի «Ռենկո Արմէստեյտ» բառերը փոխարինել «Ալ Պառկո Հյուրանոց» բառերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 269-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Երևանի քաղաքային համայնքի վարչական տարածքում ծառայողական ավտոկայանատեղերի կազմակերպման կարգը սահմանելու մասին» N 93-Ն որոշմամբ սահմանված է, որ Երևանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում ծառայողական ավտոկայանատեղ կարող է կազմակերպվել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից Երևանի քաղաքապետին ուղղվող դիմումների հիման վրա՝ Երևան քաղաքի ավագանու որոշումներով: Միաժամանակ նշվում է, որ հայցվող ծառայողական ավտոկայանատեղերի հստակ տեղերը, սահմանները և ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցի կայանման ձևը նախապես ենթակա է համաձայնեցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ:

25.12.2014թ. Հասմիկ Սարգսյանը դիմել է Երևանի քաղաքապետին ք. Երևան Նալբանդյան 48/1 շենքի հարակից ճանապարհահատվածում /Սախարովի հրապարակում/՝ 7 /յոթ/ ավտոմեքենայի համար ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու խնդրանքով՝ դիմումին կցելով Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 93-Ն որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ համաձայնեցվել է ծառայողական ավտոկայանատեղի վայրը, որի վերաբերյալ առկա է նշված կառույցի 2015 թվականի հունվարի 12-ի հ.17-3-12 գրությունը:

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի Երևան քաղաքի ավագանու N104-Ա որոշմամբ «Ռենկո Արմէստեյտ» ՍՊԸ-ին թույլատրվել է ք. Երևան Իտալիայի 1 հասցեին հարակից ճանապարհահատվածում կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ, իսկ 23.12.2014 թվականի Երևան քաղաքի ավագանու հ. 269-Ա որոշմամբ վերոնշյալ ընկերությանը թույլատրվել է մինչև 31.12.2015թ. շարունակել կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը:

15.01.2015թ. Երևանի քաղաքապետին է դիմել «Ալ Պառկո Հյուրանոց» ՍՊԸ-ի տնօրենը՝ տեղեկացնելով, որ վերոնշյալ հասցեի անշարժ գույքի սեփականատերը փոխվել է և նոր սեփականատեր է հանդիսանում «Ալ Պառկո Հյուրանոց» ՍՊԸ-ն՝ դիմումից կցելով սեփականատեր լինելը հավաստող փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալյալից և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 93-Ն որոշման «Երևանի քաղաքային համայնքի վարչական տարածքում ծառայողական ավտոկայանատեղերի կազմակերպման» կարգի 2-րդ կետը՝ համաձայն, որի ծառայողական ավտոկայանատեղը կարող է տրամադրվել միայն դիմողին սեփականության իրավունքով պատկանող կամ այլ օրինական հիմքով տիրապետվող և գործունեության իրականացման վայր հանդիսացող շենքին և (կամ) շինությանը (կամ դրա հատվածին) անմիջապես հարակից ճանապարհահատվածի սահմաններում, անհրաժեշտություն է առաջացել նախապատրաստել Երևան քաղաքի ավագանու «Հ.Սարգսյանին ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» և «Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 269-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 269-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հ. Սարգսյանին ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» և «Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 269-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 269-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հ. Սարգսյանին ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» և «Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 269-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2015 թվականի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխությունների անհրաժեշտությունը բացակայում է:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2015 թվականի փետրվարի 10-ի
N----- -Ա որոշման

Քաղաքացի Հ.Սարգսյանին ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունքի տրման պայմանները

Դիմող	Ծառայողական կայանատեղի տարածքի հասցե	Կայանատեղում «ավտոտեղ»-երի քանակ (տարածքի չափեր) և կայանման ձև	Կազմակերպչի կողմից վճարված տուրք	Այլ տրանսպորտային միջոցների կայանման սահմանափակում, աշխատանքային ռեժիմ
Քաղաքացի Հասմիկ Սարգսյան (անձնագիր՝ AH0437774, տրված 10.07.2007թ., 011 կողմից)	Սախարովի հրապարակ՝ Նալբանդյան փողոցի հ.48/1 հասցեին հարակից ճանապարհահատված	7 (17.5 մ x 5.0 մ), միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամբ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, բացառությամբ Նալբանդյան փողոցի հ.48/1 հասցեի շենքի սեփականատերերի և այլ օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ երկուշաբթի-ուրբաթ ժ.08^{00}-18^{00}